



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԴՁՈՐԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

**USAID ARMENIA, SOCIAL
PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT**

ՍՊՀՀ մամլո հաղորդագրություն # [18]

Երևան, Հայաստան
24 հոկտեմբերի, 2008թ.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Հրազդանի զբաղվածության մարզային և Չարենցավանի տարածքային կենտրոնների վերագործարկումը՝ որպես մոդելային կենտրոններ

Ս.թ. հոկտեմբերի 24-ին, ժ. 10.30-ին Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի զբաղվածության մարզային (Հրազդան, Կենտրոն, թիվ 6 մանկապարտեզ) և ժ. 11.30-ին Չարենցավան քաղաքի զբաղվածության տարածքային (Չարենցավան 4-րդ թաղ., 18 շենք) կենտրոնները վերանորոգումից հետո կվերագործարկվեն և կսկսեն իրենց գործունեությունը որպես մոդելային կենտրոններ:

Հրազդանի զբաղվածության մարզային կենտրոնը սպասարկում է 18 համայնքների: Կենտրոնում գրանցված է 1671 աշխատանք փնտրող, որից 1376-ը կին, իսկ 124-ը երիտասարդ: Հրազդանի զբաղվածության մարզային կենտրոնը համագործակցում է թվով 1050 գործատուի հետ:

Չարենցավանի զբաղվածության տարածքային կենտրոնը սպասարկում է 4 համայնքների: Կենտրոնում գրանցված է 1956 աշխատանք փնտրող, որից 1414-ը կին, իսկ 510-ը երիտասարդ: Չարենցավանի զբաղվածության տարածքային կենտրոնը համագործակցում է թվով 699 գործատուի հետ:

Հրազդանի և Չարենցավանի զբաղվածության կենտրոններում աշխատում են արհեստավարժ մասնագետներ, որոնք բազմիցս վերապատրաստվել են պետական և միջազգային ծրագրերի շրջանակներում, մասնակցել տարբեր ուղղվածության ուսումնական այցերի, որոնց արդյունքում ձեռք բերված հմտություններն ու փորձը օգտագործվել են ի նպաստ կենտրոնների շահառուների սպասարկման:

Շահառուների լիարժեք սպասարկման գործում վերապատրաստումներից և աշխատակազմի որակավորման բարձրացումից բացի, անհրաժեշտ էր նաև աշխատակազմին ապահովել համապատասխան աշխատանքային պայմաններով, ինչը և իրականացվեց ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի աջակցության շնորհիվ:

Այժմ այս կենտրոնները վերանորոգված և կահավորված են: Յուրաքանչյուր կենտրոնում ամբողջովին վերակառուցվել և համապատասխան ուսուցման պիտույքներով ու պարագաներով վերակահավորվել են դասասենյակներ վերապատրաստման դասընթացների անցկացման և խմբային աշխատանքների կազմակերպման համար:

Նոր աշխատանքային պայմաններում գործող մոդելային այս կենտրոններն իրենց ներդրումը կունենան մարզի աշխատանք փնտրողներին և գործատուներին արդյունավետ ծառայություններ մատուցելու գործում:

ԱՄՀՆ ԶՊԾԳ կազմում գործում են 10 մարզային և 41 տարածքային կենտրոններ:

2007-2008թթ. Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում վերանորոգվել են 12, իսկ 2008թ. առաջին կիսամյակում ԱՄՆ ՄԶԳ «Կամուրջ» ծրագրի շրջանակներում՝ ևս 5 կենտրոն: